կարելի էր հանդուրժել, ապա բնական է, որ հրովարտակների բովանդակությունը վերաշարադրելիս Դավրիժեցին չէր կրկնաբանի իր ժողովրդի և անձամբ իր մեջ ամրագրված կերպարին ծայրահեղ հակառակ այդ բնութագրերը: Մանավանդ որ՝ իր պատմության ամբողջ ընթացքում Շահ-Աբասի անունը հիշատակելիս՝ Դավրիժեցին անպայմանորեն այն ուղեկցում է այսպես ասած՝ «ներածական» մասով՝ «վիշապն անդընդային... որ ի սկզբանէ զբարս օձի ունէր բնաւորեալ յինքեան ընդդէմ քրիստոնէից» (էջ 69), «հանճարեղն ի խորհուրդս չարեաց» (էջ 71), «աւերիչն աշխարհաց և վատնիչն քրիստոնեայ ազանց, բնակարանն Նեսարայ» (էջ 78), «անվթար կամարարն սատանայի՝ երկրորդ Սաբիւռոսս այս» (էջ 124) և այլն:

Կան հրովարտակի անվամբ, բայց, ըստ էության, նամակային տարրերով հատկանշվող թղթային միավորներ: Դրանք, բովանդակությունից դատելով, գաղտնի հրաման-նամակներ են (տե՛ս էջ 187 և 189), իսկ գաղտնիությունը հակասում է հրովարտակի, այսպես ասած՝ ժանրային նկարագրին, քանզի հրովարտակին հատուկ է հրապարակային բնույթը: Շահ-Աբասի անվամբ՝ առկա են նաև հրովարտակի ու բուն նամակի զուգադիր ներժանրային կիրարկումներով թղթեր, ինչպես՝ «գրեաց առ Լաւասափ և առ մայր նորա վասն քեռ Լաւասափին ***թուղթ սիրոյ և ողջունի***» (էջ 124): Սա նամակ է, քանզի ունի անմիջական հասցեատեր, բայց և նամակ չէ, քանզի տեքստը կառուցված է հրովարտակային միավորներով:

Դավրիժեցու պատմագրքում պահպանվել են բազմաթիվ ***աղերսագրեր*** և ***խնդրագրեր***, որ հայերը, առավել հաճախ՝ ի դեմս իշխանների ու կաթողիկոսների, գրել են Շահ-Աբասին կամ նրա պաշտոնյաներին՝ դիմելով նրանց տարաբնույթ խնդրանքներով: Դրանք նույնպես դիտարկելի են թղթի ժանրային տիրույթում՝ ***նամակ-աղերսագիր*** կամ ***նամակ-խնդրագիր*** ժանրանվանմամբ: